

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԲԱՐԻՔՆԵՐԸ


Չկարծես, թե արքայութիւնը դրամով կը գնուի, ո՛չ, այլ՝ յօժարութեամբ, որ դրամի միջոցաւ կը յայտնուի: Ոմանք կ'ըսեն. «Եթէ այդպէս է, ուրեմն դրամով կ'ըլլայ»: Դրամով չ'ըլլար, այլ՝ կամքով, որովհետեւ այրի կնոջ նման դուն եւս կրնաս երկու դահեկանով երկինքը գնել, եթէ բարի կամեցողութիւն ցոյց տաս, առանց որուն նոյնիսկ ասհագին արծաթով չես կրնար:

Աստուած արքայութիւնը խոստացաւ ո՛չ թէ գաւաթ մը պաղ ջուրի փոխարէն, այլ՝ սրտի յօժարութեան, նաեւ ո՛չ ալ մահուան փոխարէն, որ ինքնին մեծ բան մը չէ: Ի՞նչ կ'արժէ հոգի մը տալը, երբ մարդը ինքնին ոչի՛նչ կ'արժէ: Մեր հոգին գին չունի առանց Քրիստոսի արեան, որուն համար սատանան կը նախանձի: Հետեւաբար, երկնից արքայութիւնը ո՛չ թէ դրամով կը գնուի, այլ՝ կամքովը անոնց, որոնք դրամ կուտան:

Չեռքին տուածը ի՛նչ ալ ըլլայ, սրտի սէրը կը յայտնէ, որովհետեւ հոգիի ձեռքերը տեսական եւ գործնական առաքինութիւններն են: Եւ որովհետեւ կամքը եւ կարեկցութիւնը մարմնաւոր բաներէ վեր են, եւ յաղթանակը ո՛չ թէ արծաթն է, այլ՝ բարի կամեցողութիւնը, ի՛նչ որ յայտնի է այրիին օրինակէն, ուստի սրտի յօժարութիւն ցոյց տանք, որպէսզի ոչ միայն արքայութիւնը ստանանք, այլեւ՝ սուրբերու փառքին հաղորդակից դառնանք:

Մաշկետրցի Հայրապետ

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՎՐԼԴԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀՎՍՏԱՏՈՒՄԸ


2.- Պատրաստութիւն ընծաներուն

Աւագ Սարկաւազը Սկիհը կը տեղադրէ Խորհրդարանին մէջ: Վարագոյրը կը բացուի:

Ի յիշատակ Քրիստոսի Մարդեղութեան՝ երկինքէն երկիր խոնարհելուն եւ մարդոց մէջ շրջագայելուն, պատարագիչ քահանան Ս. Խորանի աջակողմեան աստիճաններէն վար կ'իջնէ բուրվառը ձեռքին, կը խնկարկէ, թափօր կը դառնայ եկեղեցւոյ մէջ, կ'օրհնէ ժողովուրդը եւ ձախակողմեան աստիճաններէն կը բարձրանայ Ս. Խորան, իր հետ Ս. Սեղան բարձրացնելով պատարագոտող Աստուածորդոյն ուղղուած՝ հաւատացեալ ժողովուրդին աղօթքն ու աղերսանքը:

Բ.- ՃԱՇՈՒ ՊԱՇՏՕՆ...

...Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 31 ՄԱՐՏ 2024

ԹԻԻ 13

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գրծ. 1.15-26: Մր. 16.1-8

ԶԱՏԻԿ: ՏՕՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՆՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՒ ՅԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՒ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 16.1-8

Շաբաթ օրը, երբ անցաւ, Մարիամ Մագդաղենացին, Մարիամ՝ Յակոբի մայրը եւ Սողոմէն զացին խունկեր գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի երթան եւ օժեն Յիսուսի մարմինը: Կիրակի առաւօտ կանուխ, արեւածագին, գերեզման եկան: «Ո՛վ պիտի գլորէ գերեզմանի մուտքին դրուած քարը», կը հարցնէին իրարու, որովհետեւ քարը շատ մեծ էր: Մակայն, երբ նայեցան, տեսան, որ քարը արդէն իսկ գլորուած էր: Գերեզմանէն ներս մտան եւ ճերմակ զգեստ հագած երիտասարդ մը տեսան, որ աջ կողմը նստած էր: Մարսափեցան: Երիտասարդը ըսաւ անոնց. «Մի՛ վախճաք, զիտեմ, որ խաչուած Նազովրեցի Յիսուսը կը փնտռէք, բայց հոս չէ, յարութիւն առաւ: Տեսէք զինք հոս դրած էին: Այժմ զացէ՛ք, ըսէ՛ք իր աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա Յիսուս ձեզմէ առաջ կ'երթայ Գալիլիա: Հոն պիտի տեսնէք զինք, ինչպէս որ ըսած էր ձեզի»:

Երբ ասիկա լսեցին, դուրս փախան գերեզմանէն, զարհուրած եւ ապշահար, ու ոչ մէկուն բան մը ըսին՝ որովհետեւ կը վախճային:

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եթէ արմատէն կտրուած ծառը կրնայ վերստին աճիլ եւ ծաղկիլ՝ արդեօք մարդը վերստին պիտի չծաղկի: Եթէ սերմանուած սերմերը վերստին աճելով եւ հնձուելով կը պատրաստուին կալի, մարդ արարածը ինքն ալ վերստին կալի չի՞ պատրաստուիր: Եթէ այգիներէն կամ խառերէն քաղուած կամ կտրուած ճիւղերը ուրիշ տեղ տնկուած ըլլալով վերստին կ'աճին, մարդն ալ այս բոլորով հանդերձ, եթէ հող դրուի, միթէ վերստին պիտի չկենդանանա՞յ: Դուն ի՛նքզի դատէ եւ տես թէ ո՞ր մէկը աւելի դիւրին ու մեծ բան է. նոր ստեղծել ամենեւին չստեղծուածը, թէ՛ ինկածը եւ կործանուածը վերստին ձուլել՝ ստեղծելով անկէ նոր պատկեր:

(Կիւրեղ Երուսաղէմացի)

ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ



Ի՞նչ է շարժվում բանը ըստ սուրբ Սուրբի:

Զատիկ բառը ունի բազմաթիվ բացատրություններ: Ոմանք մամուռի և կր գտնեն Երբայեցիներու Պասեֆին (Passover) հետ: Պասեֆ կը նշանակէ ելք: Հրեաներու ամենամեծ ու յարգուած տօներէն մէկն է Պասեֆը: Անոնք կը յիշատակեն Եգիպտոսի ծանր լուծէն իրենց ազատիլն ու ելքը: Իսկ մենք՝ Քրիստոնեաներս, Յիսուսի չարչարանքի արդիւնքով հրաշափառ Յարութեամբ կը յիշատակենք մարդկութեան մահուան իշխանութենէն ու սատանայի ծառայութենէն դուրս գալը եւ երկնքի արքայութեան արժանի դառնալը: Յիսուսի կեանքին վերջին դրուագները տեղի ունեցան հրեաներու Պասեֆի տօնին:

2.- Զարկուան ժողովրդական սովորութիւններ:

Զատկուան ժողովրդական սովորութիւններէն կարելի է յիշատակել հաւկիթը կարմիր ներկելը եւ հաւկթաթախաղը: Հիները հաւկիթը կ'ընդունէին իբրեւ տիեզերքի խորհրդանշան եւ կը հաստատէին՝ թէ հաւկիթին կեղեւը կը նշանակէ ցամաք, սպիտակը՝ ջուր, դեղնուցը՝ կրակ: Սովորութիւն էր գարնանամուտի օրը, իբրեւ ընծայ իրարու հաւկիթ տանիլ, մանաւանդ՝ կարմիր: Նաեւ ոսկիէ կամ արծաթէ շինուած կարմիր հաւկիթներ կը տարուէին իշխաններուն, իբրեւ հպատակութեան նշան: Ասիկա կ'ըլլար արեւելի մէջ, մանաւանդ հայերուն եւ պարսիկներուն մօտ:

Բոլոր կրօններուն մէջ ալ հաւկիթը իր կարեւոր տեղը ունէր, մինչեւ իսկ Հռոմէացիները եւ յոյները հաւկիթ կը նուիրէին իրենց աստուածներուն՝ սրբուելու եւ մաքրուելու համար:

Հրեաները Պասեֆի տօնին կը պատրաստէին բաղարջ հաց (առանց քթիմորի հաց): Պասեֆի սեղանին վերայ անպայման պէտք էր ըլլար նաեւ գատկական գառնուկը եւ պինդ խաշած հաւկիթը:

Հաւանաբար Պասեֆի այս սովորութիւնը փոխանցուեցաւ քրիստոնեաներուն:

Զատկական հաւկիթը Քրիստոնեային համար խորհրդանշան է այն ժայռէ գերեզմանին, ուրկէ Քրիստոս Յարութիւն առաւ:

3.- Ի՞նչու հաւկիթը կարմիր կը ներկեն:

Կարմիր ներկը անցեալին ամէն տեղ չէր գտնուեր: Յայտնի է, թէ կարմիր ներկին հայրենիքը Արեւելին է, ուր կը գտնուի որդան կարմիրը, որմէ կ'արտադրուէր կարմիր ներկը եւ կը տարածուէր ամբողջ աշխարհին մէջ:

Հաւկիթը կարմիր ներկելու աւանդութիւնը կը բացատրուի հետեւեալ ձեւով: Նախ՝ կարմիրը սիրոյ գոյնն է: **Նրկորդ**՝ հայերը բնապաշտ ժողովուրդ եղած են եւ բնութեան մէջ գերընտիր բերքն է որդան կարմիրը, ինչպէս որ բնութեան ծննդաբերութիւններուն մէջ հրաշալի է հաւկիթը, ուստի հաւկիթը կարմիր ներկելով նուիրագործած են գայն: **Նրորդ**՝ հաւկիթը կարմիր կը ներկուի որպէս ուրախութեան նշան: **Զորորդ**՝ Կարմիրը կը խորհրդանշէ նաեւ, որպէս գոհի արիւնը, որ կը բացատրուի իբրեւ Քրիստոսի թափած արիւնը աշխարհի փրկութեան համար:

Հաւկիթը կը ներկեն Զատկուան նախորդող օրը՝ Շաբաթ օր:

ՄԵՐ ԱՊՕԹՔՆԵՐԸ ԱՄՐՏԵՆՔ ԸՍԵՆՈՎ՝ «Ո՞՞ ԹԵ ԻՍ ԿԱՍՔԱ, ԱՅՆ՝ ՔՈՒ ԿԱՍՔՊ ԹՈՂ ԸԼԼԱՅ»

Մեր աղօթքները աւարտենք ըսելով. «Ոչ թէ իմ կամքս, այլ՞ քու կամքդ թող ըլլայ»: «Հայր, եթէ ուզես՝ այս բաժակը հեռացուր ինձմէ. բայց ոչ թէ իմ կամքս, այլ քու կամքդ թող ըլլայ»: Յիսուս ինքզինք ծանր փորձութեան մը դէմ յանդիման գտաւ, եւ թէն խնդրեց փորձութեան այդ բաժակին հեռացումը իրմէ, սակայն, իր աղօթքը աւարտեց ըսելով. «Քու կամքդ թող ըլլայ»:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Յիսուս իր վերաբերմունքով սուրվեցուց մեզի. առաջին՝ աղօթել, երբ փորձութեան առջեւ կանգնած ենք, եւ երկրորդ՝ աղօթել եւ խնդրել Աստուծոյ կամքին կատարումը: Ամէն քրիստոնեայ իր աղօթքը պէտք է աւարտէ ինչպէս Քրիստոս աւարտեց. «Ոչ թէ իմ կամքս, այլ՞ քու կամքդ թող ըլլայ»: Մեր աղօթքները այսպէս աւարտելը կարեւոր է, որովհետեւ կրնանք աղօթել եւ խնդրել բան մը, որ Աստուծոյ կամքին հակառակ է: Եւ չմոռնանք, որ երբ աղօթքի ընթացքին Աստուծոյ կամքին կատարումը կը խնդրենք, Աստուծոյ կամքը մեր կամքէն վեր դասած կ'ըլլանք եւ մեր կամքը Աստուծոյ կամքին ենթարկած կ'ըլլանք եւ ճիշդ այդ է ընդունելի աղօթքը:

ԱՆԴԱՍԱՆ

Անդաստանը աշխարհի չորս ծագերու օրհներգութեան նուիրուած արարողութիւնն է՝ ժամանակին ան կը նուիրուէր արտերու եւ անդաստաններու պտղաբերութեան համար: Այդ օրերուն, Անդաստանը կը կատարուէր եկեղեցիէն դուրս՝ արտերու եւ այգիներու մէջ: «Անդաստան ելլել» կամ «Անդաստան օրհներ» կը նշանակէ աշխարհի չորս կողմերը օրհներ: Արարողութեան ժամանակ, հոգեւոր դասը խաչով, խաչվառով եւ Աւետարանով երգելով կ'օրհնէր արեւելքը եւ այդ կողմ գտնուող Հայոց հայրապետութիւնը՝ Սուրբ խաչի եւ Աւետարանի նշանով, յանուն Սուրբ երրորդութեան: Ապա կ'օրհնուէր եւ պահպանման խնդրանք կը ներկայացուէր աշխարհի արեւմտեան կողմի համար, ուր Քրիստոնեայ թագաւորութիւններ եւ ազգեր կային: Դէմքերը դէպի հարաւ դարձնելով՝ կ'օրհնէին հարաւը, այնտեղ գտնուող երկիրները, անդաստանները եւ տարուան պտղաբերութիւնը: Դէպի Հիւսիս դառնալով կ'օրհնէին վերջապէս հիւսիսային կողմը գտնուող վանքերը, անապատները, քաղաքներն ու գիւղերը եւ անոնց բնակիչները:

Ներկայիս Անդաստանը կը կատարուի եկեղեցւոյ ատենանէն ներս, այսինքն եկեղեցւոյ մէջտեղը: Գիրքի ընթերցումէն ետք, բոլոր ներկայ եկեղեցականները շուրջառնելով կը զգեստաւորուին: Հանդիսապետը խաչն ու գաւազանը կ'առնէ եւ կը կենայ եկեղեցւոյ մէջտեղը: Միւս եկեղեցականները կ'առնեն խաչը կամ Աւետարանը, հանդիսաւոր օրերուն նաեւ այլ մասունքներ՝ եւ կը կենան հանդիսապետին կողքին, եկեղեցւոյ մէջտեղ, դէմքերը դարձած դէպի Արեւելք: Բուրվառակիր սարկաւազը, մոմակալները եւ միւս սարկաւազները վառած մոմերը բռնած կը տեղաւորուին ատենանին եզերքը, եկեղեցականներուն դիմաց, դէմքերը դէպի Արեւմուտք: Իսկ դպիրները ձեռքերնին մէկական վառած մոմ՝ կը շարուին բեմին առջեւ, դէմքերը դէպի Արեւմուտք: